Հավելված
Հաշվեքննիչ պալատի 2020 թվականի
հուլիսի 30-ի թիվ 114-Ա որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ

# ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

## ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՋՐԱՅԻՆ ԿՈՄԻՏԵՈՒՄ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵՐԵՔ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածական մաս ..... 3
2. Ամփոփագիր ..... 5
3. Տվյալներ հաշվեքննվող օբյեկտի ֆինանսական հաշվեքննության վերաբերյալ ..... 8
4. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ ..... 10
5. Խեղաթյուրումների վերաբերյալ գրառումներ ..... 12
6. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր ..... 14
7. Եզրակացություն ..... 15
8. Առաջարկությունների ամփոփագիր ..... 17

# ՆԵՐԱԾԱԿԱՆ ՄԱՍ

| | |
|---|---|
| Հաշվեքննության հիմքը | ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020 թվականի մայիսի 26-ի թիվ 88-Ա որոշում: |
| Հաշվեքննության օբյեկտը | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտե: |
| Հաշվեքննության առարկան | ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեություն: |
| Հաշվեքննության չափանիշները | ՀՀ կառավարության 26.12.2019թ. «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N1919-Ն որոշում,<br>ՀՀ կառավարության 28.02.2019թ. «ՀՀ Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային կոմիտեի «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի գործութնեությունը դադարեցնելու և ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 28-ի N 531-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N170-Ն որոշում,<br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի և ջրոգտագործող ընկերությունների միջև 27.02.2020 թ. կնքված՝ «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեով նախատեսված սուբսիդիայի տրամադրման» NN 1-ից 15-ը, 05.03.2020թ. կնքված՝ N16 և 09.03.2020թ. կնքված՝ N17 պայմանագրեր,<br>ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 18.02.2020թ. «Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին 2020թ. Ֆինանսական աջակցության տրամադրման չափաքանակները՝ ըստ առանձին ջրօգտագործողների ընկերությունների հաստատելու մասին» N206-Ա հրաման: |

| | |
|---|---|
| Հաշվեքննությունն ընդգրկող ժամանակաշրջանը | 2020թ. հունվարի 1-ից մինչև 2020թ. մարտի 31-ը ներառյալ: |
| Հաշվեքննության կատարման ժամկետը | 2020թ. հունիսի 8-ից մինչև 2020թ. հուլիսի 31-ը ներառյալ: |
| Հաշվեքննության մեթոդաբանությունը | Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի, Հաշվեքննիչ պալատի ֆինանսական և համապատասխանության հաշվեքննության մեթոդաբանությունների, ՀՀ պետական բյուջեի 3,6,9 ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության մեթոդաբանությունների համաձայն:<br>Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են զննում, դիտարկում, հարցում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ ընթացակարգերը: |
| Հաշվեքննությունն իրականացրած կառուցվածքային ստորաբաժանում | Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի վեցերորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Գագիկ Ոսկանյանը: |

# ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտեի (այսուհետ՝ Ջրային կոմիտե) 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվետվությամբ տարեկան ճշտված պլանը կազմել է 49,680,866.2 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2020 թ. 1-ին եռամսյակ) ճշտված պլանը կազմել է 12,705,615.6 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 1,633,276,05 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,616,209.52 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 1,442,826.41 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 11.36 %-ով:

Ջրային կոմիտեում 2020 թվականի 1-ին եռամսյակում ՀՀ պետական բյուջեով սահմանված 7 ծրագրի շրջանակում նախատեսվել է իրականացնել թվով 25 միջոցառում՝ որից իրականացվել է 14-ը, չի իրականացվել 11 միջոցառում:

Հաշվեքննությամբ ընդգրկվել են Ջրային կոմիտեի կողմից իրականացվող՝ «1004 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման» ծրագրի շրջանակում «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում», «11005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի խորհրդատվություն և կառավարում» թվով երկու և «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառումները՝ ընդամենը 973,883.97 հազ.դրամ արժեքով:

Ըստ առանձին միջոցառումների հաշվեքննությամբ ընդգրկվել են հետևյալ էական փաստերը՝

1. «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման շրջանակում գարնան նախապատրաստական աշխատանքների կատարման համար «4521 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով նախատեսված գումարների բաշխման նպատակով Ջրային կոմիտեի կողմից 15 ջրօգտագործող ընկերությունների հետ կնքվել են թվով 17 սուբսիդիայի տրամադրման պայմանագրեր, որոնց պահանջների կատարումը, սակայն, որոշ դեպքերում չի ապահովվել: Մասնավորապես, չի պահպանվել սահմանված 30%-ի չափով գումարի չափաբաժնի հատկացման վերաբերյալ կնքված պայմանագրի 1.1.1 կետի պահանջի կատարումը: Բացի այդ, անտեսելով 1.1.3 կետի պահանջը՝ «Սինխրոն» ՍՊԸ-ի հանդեպ թվով 6 ջրօգտագործող ընկերությունների մոտ

նախորդ տարիներին գոյացած կրեդիտորական պարտքի մարման համար հատկացվել է 21,986.6 հազ. դրամի չափով գումար, որը կարող էր մարվեր պետական բյուջեից և սեփական միջոցներից տրամադրված գումարների հաշվին: Չեն պահպանվել նաև կնքված պայմանգրերի 3.2 և 5.2 կետերի պահանջները՝ կապված համապատասխանաբար՝ հատկացված գումարների ծախսման վերաբերյալ ջրօգտագործող ընկերությունների կողմից հաշվետվությունները և հանձնման-ընդունման ակտերը սահմանված ժամկետներում ներկայացնելու հետ:

Ջրային կոմիտեի կողմից չի պահպանվել ՀՀ պետական բյուջեից ջրօգտագործող ընկերություններին սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի 1.1.2 կետի պահանջը՝ սուբսիդիայի հատկացման ենթակա 23,113.9 հազ. դրամի փոխարեն հատկացվել է 77,841.6 հազ. դրամ, որից 54,727.6 հազ. դրամն ուղղվել է նախկին տարիների հարկի, տույժի և տուգանքի պարտքի մարմանը: Փաստորեն, Ջրային կոմիտեի կողմից բավարար միջոցներ չեն ձեռնարկվել ջրօգտագործող ընկերությունների կառավարման արդյունվետությունը և ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների համար նրանց պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ:

Ջրային կոմիտեի կողմից իրականացվող՝ «1004 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի» 11005 և 31005 միջոցառումների մասով հիմնականում արձանագրվել են խեղաթյուրումներ՝ կապված փաստի (դրամարկղային ծախս) նկատմամբ համաֆինանսավորման գումարների գերազանցման հետ: Այսպես՝ «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջացառման «511200 Շենքեր և շինություններ» հոդվածով հաշվետու ժամանակահատվածում ավելի ֆինասավորված գումաը կազմել է 182,401.0 հազ. դրամ, «11005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի խորհրդատվություն և կառավարում» միջոցառման «411100 Աշխատողներին աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով՝ 1,871.9 հազ. դրամով, իսկ նույն միջոցառման «486100 Այլ ծախսեր» հոդվածով՝ 3,001.8 հազ. դրամով: Վերոնշյալ փաստերը հետևանք են ֆինանսավորման հիմքում ընկած մասհանման հայտերի ձևավորման և շրջանառության ընթացակարգերում Ջրային կոմիտեի վերահսկողական գործառույթների սահմանափակվածության:

Հաշվեքննությամբ արձանագրվել են նաև միջոցառումների շրջանակում նախատեսված ծախսային հոդվածներով պլանային ցուցանիշների էական թերակատարման փաստեր: Օրինակ՝ «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում Ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում»

միջոցառման «511200 Շենքեր և շինություններ» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը հաստատվել է 2,355,569.1 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 650,655.6 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 27,6 %: «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի շրջանակում «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման «452100 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 1,999,205.6 հազ. դրամ, ֆինանսավորումը, փաստացի ծախսը, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 462,680.9 հազարական դրամ՝ ճշտված պլանի նկատմամբ կազմելով 23.1%:

# ՏՎՅԱԼՆԵՐ
# ՀԱՇԵՔՆՆՎՈՂ ՕԲՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ջրային կոմիտեի 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվետվությամբ տարեկան ճշտված պլանը կազմել է 49,680,866.2 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածի (2020 թ. 1-ին եռամսյակ) ճշտված պլանը կազմել է 12,705,615.6 հազ. դրամ, ֆինանսավորումը՝ 1,633,276,05 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 1,616,209.52 հազ. դրամ, փաստը (դրամարկղային ծախս)՝ 1,442,826.41 հազ. դրամ: Հաշվետու ժամանակահատվածում ճշտված պլանի նկատմամբ բյուջեն կատարվել է 11.36 %-ով:

Ջրային կոմիտեում 2020 թվականի պետական բյուջեի երեք ամիսների կատարման նկատմամբ հաշվեքննություն իրականացնելու համար, որպես հաշվեքննության նշանակալի հոդվածների նվազագույն ծածկույթ 1-ին եռամսյակի համար (871,168.0 հազ.դրամ) հիմք է ընդունվել ՀՀ հաշվեքննիչ պալատի 26.05.2020 թվականի թիվ 93-Լ որոշումը: Ելնելով վերոգրյալ սահմանաչափից՝ ընտրանքով ընդգրկվել է երկու միջոցառում՝ 935,775.61 հազ. դրամ ընդհանուր գումարով, որը գերազանցել է նախատեսված նվազագույն ծածկույթի շեմը 64,607.6 հազ. դրամով: Միաժամանակ՝ ի լրումն նշված երկու միջոցառումների, ընտրանքում ներառվել են ևս երկուսը, որոնք անմիջականորեն կապված են «Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող՝ ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման հետ: Այսպիսով՝ ընդհանուր հաշվեքննության ենթակա փաստի (դրամարկղային ծախս) գումարը կազմում է 973,883.97 հազ.դրամ, որը նվազագույն ծածկույթի շեմից ավելի է 102,715.9 հազ. դրամով:

Հաշվեքննությամբ ընդգրկվել են Աղյուսակ 1-ում նկարագրված ծրագրերի շրջանակներում իրականացված միջոցառումները:

Աղյուսակ 1

Հաշվեքննությամբ ընդգրկված ծրագրերի շրջանակներում միջոցառումների վերաբերյալ

հազ. դրամ

| Ծրագիր, միջոցառում, հոդված | | Հաշվետու ժամանակահատվածի պլան | Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան | Փաստացի ծախս | Փաստ/ Դրամարկղային ծախս |
|---|---|---|---|---|---|
| Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը | | 4,526,371.8 | 4,522,749.4 | 1,156,139.9 | 973,884.0 |
| 1004 | Ոռոգման համակարգի առողջացում | | | | |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | 11002 | Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում | | 1,999,205.6 | 1,999,205.6 | 462,681.0 | 462,681.0 |
| | | 452100 | Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություն ներին | | | | |
| | 11005 | Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի խորհրդատվություն և կառավարում | | - | 24,934.1 | 12,137.4 | 12,137.4 |
| | | 411100 | Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ | | | | |
| | 11005 | Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի խորհրդատվություն և կառավարում | | 171,597.1 | 143,040.6 | 30,665.9 | 25,971.0 |
| | | 486100 | Այլ ծախսեր | | | | |
| | 31005 | Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում | | 2,355,569.1 | 2,355,569.1 | 650,655.7 | 473,094.7 |
| | | 511200 | Շենքերի և շինությունների շինարարություն | | | | |

Ջրային կոմիտեում 2020 թվականի 1-ին եռամսյակում առկա 7 ծրագրի շրջանակում նախատեսվել է իրականացնել թվով 25 միջոցառում՝ որից իրականացվել է 14-ը, չի իրականացվել 11 միջոցառում:

# ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N1919-Ն որոշման «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» 04.02.04.01 ծրագրով «4521 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով 15 ջրօգտագործողներ ընկերությունների միջև հատկացված գումարների բաշխման նպատակով կնքված պայմանագրերի 1.1.1 կետի պահանջի հետ: Գարնան նախապատրաստական աշխատանքների իրականացման համար նյութածախսի կատարման նպատակով Ջրային կոմիտեի կողմից որոշում է կայացվել ջրօգտագործողների ընկերություններին հատկացնել նախնական վճար 30%-ի չափով:

Ըստ 15 ջրօգտագործողների ընկերությունների ներկայացրած հաշվետվությունների՝ գարնան նախապատրաստական աշխատանքների կատարման համար հատկացվելիք ընդհանուր գումարը կազմելու է 1,032,268.8 հազ. դրամ, որի 30%-ը՝ 309,680.6 հազ. դրամ: Իրականում, Ջրային կոմիտեի կողմից հաշվարկվել և վճարվել է 280,645.0 հազ. դրամ, կամ 29,035.6 հազ. դրամով պակաս: Սահմանված 30%-ի չափով վճարման պահանջը կատարվել է ընդամենը 3 դեպքում, 46,351.0 հազ. դրամ ընդհանուր գումարի չափով պակաս վճարման փաստեր արձանագրվել են 10, իսկ 17,315.4 հազ. դրամի սահմանվածից ավելի վճարման փաստեր՝ 2 դեպքում:

Ըստ ջրօգտագործողների ընկերությունների՝ 2020 թվականի ֆինանսական հոսքերի հաշվետվությունների հիմքը կազմող՝ աշխատանքների կատարման նախագծերը և թերությունների ակտերում նկարագրված աշխատանքների հաշվարկման նախահաշիվները որոշ դեպքերում բացակայում են:

2. Առկա է անհամապատասխանություն ՀՀ պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման նպատակով Ջրային կոմիտեի և ջրօգտագործողների ընկերությունների միջև կնքված պայմանագրերի 1.1.3 կետի հետ: Վերոնշյալ պայմանագրով սուբսիդիայի գումարները հատկացվում են ընթացիկ տարվա երեք ամիսներին առաջացած կրեդիտորական պարտքի մարմանը: Իրականում, թվով 6 ջրօգտագործողների ընկերություններին գումարները տրամադրվել են նախորդ տարիներին նրանց՝ «Սինխրոն» ՍՊԸ-ի հանդեպ գոյացած 21,986.6 հազ. դրամի չմարված կրեդիտորական պարտքերի մարման նպատակով:

3. Առկա է անհամապատասխանություն Ջրային կոմիտեի և ջրօգտագործողների ընկերությունների միջև կնքված՝ ՀՀ պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի 3.2 կետի պահանջի հետ՝ ըստ որի «...Ընկերությունը պարտավորվում է ստացված սուբսիդիան օգտագործել

արդյունավետ և նպատակային՝ գումարները ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում Ջրային կոմիտե ներկայացնելով համապատասխան հաշվետվություններ օգտագործված գումարների ուղղությունների վերաբերյալ»: Իրականում, բոլոր 15 ջրօգտագործողների ընկերությունների կողմից հաշվետվությունները ներկայացվել են ուշացումներով:

4. Առկա է անհամապատասխանություն Ջրային կոմիտեի և ջրօգտագործողների ընկերությունների միջև կնքված պայմանագրի 5.2 կետի պահանջի մասով՝ ըստ որի «…Գումարը ստանալուց հետո մինչև հաջորդ ամսվա 10-ը Ընկերությունը Կոմիտեի աշխատակազմ է ներկայացնում աշխատանքների հանձնման-ընդունման ակտ»: Ջրօգտագործողների ընկերության կողմից աշխատանքների հանձնման-ընդունման ակտեր չեն ներկայացվել:

## ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

1. Ջրային կոմիտեի կողմից «1004 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի» 11005 և 31005 միջոցառումների մասով համաֆինանսավորման գումարները գերազանցել են փաստը (դրամարկղային ծախսը): Այսպես՝

- «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջացառման «511200 Շենքեր և շինություններ» հոդվածով հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության համաֆինանսավորումն ըստ հայտի կազմել է 285,421.5 հազ. դրամ, այն դեպքում, երբ փաստը (դրամարկղային ծախս) կազմել է ընդամենը 103,020.5 հազ. դրամ, կամ ֆինանսավորման ենթակա գումարը գերազանցվել է 182,401.0 հազ. դրամով:
- «11005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի խորհրդատվություն և կառավարում» միջոցառման «411100 Աշխատողներին աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության համաֆինանսավորումն ըստ հայտի կազմել է 6,077.9 հազ. դրամ, մինչդեռ փաստը (դրամարկղային ծախս) կազմել է 4,206.0 հազ. դրամ, կամ ֆինանսավորման ենթակա գումարը գերազանցվել է 1,871.9 հազ. դրամով:
- «11005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի խորհրդատվություն և կառավարում» միջոցառման «486100 Այլ ծախսեր» հոդվածով հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության համաֆինանսավորումն ըստ հայտի կազմել է 28,972.8 հազ. դրամ, մինչդեռ փաստը (դրամարկղային ծախս)՝ 25,971.0 հազ. դրամ, կամ ֆինանսավորման ենթակա գումարը գերազանցվել է 3,001.8 հազ. դրամով:

Վերոնշյալ խեղաթյուրումների պատճառների ուսումնասիրությամբ պարզվել է, որ դրանք հետևանք են ֆինանսավորման հիմքում ընկած մասհանման հայտերի ձևավորման և շրջանառության ընթացակարգերում Ջրային կոմիտեի վերահսկողական գործառույթների սահմանափակվածության: Ի տարբերություն նախորդ ժամանակահատվածի, երբ հայտերը կազմվում և ներկայացվում էին «Ջրային տնտեսության ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի կողմից, ՀՀ կառավարության 26.12.2019թ. «ՀՀ 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող» N 1919-Ն որոշումն ընդունելուց հետո, «1004 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի» 11005 և 31005 միջոցառման կատարողը համարվում է Ջրային կոմիտեն: Համաձայն գործող ընթացակարգի՝ նախորդ

եռամսյակի ընթացքում կատարված ծախսերի մասով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից Ջրային կոմիտեին ներկայացվում է մասհանման հայտը՝ հիմնավորումներով (կատարված աշխատանքների և դրանց համապատասխան վճարման ենթակա գումարներ՝ առանց կատարողական ակտերի), որը ՀՀ ֆինանսների նախարարության, Ջրային կոմիտեի և Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից ստորագրվելուց հետո ուղարկվում է Եվրասիական զարգացման բանկ, որն էլ մասհանված գումարի վճարումը կատարում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի անունից՝ ՀՀ ֆինանսների նախարարության գործառնական վարչությունում բացված հաշվեհամարին:

Հաշվեքննության ընթացքում Ջրային կոմիտեից պահանջվել են կատարված աշխատանքների դիմաց վճարումներն, ինչպես նաև ծախսերը հիմնավորող փաստաթղթերը, որոնք չեն ներկայացվել այն պատճառաբանությամբ, որ դրանք ներկայացնելու իրավասությունը պատկանում է Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին:

2. 2020 թվականի հունվար ամսին որպես աշխատավարձի պարտքի գումար տրամադրված սուբսիդիայի գումարից Ջրային կոմիտեի կողմից 15 ջրօգտագործողների ընկերություններից 10 ջրօգտագործողների ընկերություններին վճարվել է 63,107.7 հազ. դրամ, սակայն ըստ ջրօգտագործող ընկերությունների կողմից ներկայացված աշխատավարձի վճարման ցուցակների՝ վճարում է կատարվել 62,854.7 հազ. դրամի չափով, կամ նրանցից երկու ջրօգտագործողների ընկերությանը նախատեսվածից ավելի է վճարվել 237.0 հազ. դրամի չափով գումար: Մնացած 5 ջրօգտագործող ընկերություններ աշխատավարձի գծով պարտքեր չեն ունեցել:

3. Չի պահպանվել ՀՀ պետական բյուջեից ջրօգտագործողների ընկերություններին սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի 1.1.2 կետի պահանջը՝ կապված նրանց 2020 թվականի հունվար ամսին առաջացած աշխատավարձի և հարկային պարտավորությունների մասով պարտքերի մարման հետ: 2020 թվականի 1-ին եռամսյակում ջրօգտագործողների 15 ընկերությունների հետ կնքված՝ պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի համաձայն՝ հունվար ամսին առաջացած հարկային պարտավորությունների ընդամենը պարտքի գումարն ըստ հաշվետվությունների ներկայացվել է 77,841.6 հազ. դրամ, որից 23,113.9 հազ. դրամը՝ հունվար ամսվա հարկի, իսկ 54,727.6 հազ. դրամը՝ նախկին տարիների հարկի և տույժ, տուգանքի պարտքի գումարն է, որի վճարումը պայմանագրով նախատեսված չէ:

## ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

1. «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում Ջրային տնտեսության

ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «511200 Շենքեր և շինություններ» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը հաստատվել է 2,355,569.1 հազ. դրամ, իսկ փաստացի ծախսը կազմել է 650,655.6 հազ. դրամ, կամ փաստացի ծախսը ճշտված պլանի նկատմամբ կազմել է 27,6 %, ինչը պայմանավորված է ծախսերի պլանավորման ցածր մակարդակով:

2. «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի շրջանակում «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման «452100 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» հոդվածով հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլանը կազմել է 1,999,205.6 հազ. դրամ, ֆինանսավորումը, փաստացի ծախսը, փաստը (դրամարկղային ծախսը)՝ 462,680.9 հազարական դրամ: Այսպիսով՝ 2020 թ. 1-ին եռամսյակի փաստացի ծախսը՝ ճշտված պլանի նկատմամբ կազմել է 23.1%, ինչն արդյունք է ծախսերի թերի պլանավորման, քանի որ ֆինանսական աջակցության տրամադրման գումարի ծավալը հաշվարկվել է ելնելով 15 ջրօգտագործողների ընկերությունների կողմից ներկայացված՝ ֆինասական ճեղքվածքի մարման համար անհրաժեշտ միջոցների վերաբերյալ հաշվարկներից:
3. 2020 թվականի 1-ին եռամսյակում Ջրային կոմիտեի կողմից գարնան նախապատրաստական աշխատանքների համար նյութածախսի դիմաց շուրջ 30%-ի չափով նախնական վճարի սահմանումը չունի բավարար հիմնավորում: Ջրային կոմիտեի և ջրօգտագործողների 15 ընկերությունների միջև կնքվել են պետական բյուջեով նախատեսված թվով 17 սուբսիդիայի տրամադրման պայմանագրեր՝ 462,680.9 հազ. դրամ գումարով, որն ամբողջությամբ վճարվել է, այն դեպքում, երբ ըստ ջրօգտագործողների 15 ընկերությունների ներկայացված՝ 1-ին եռամսյակում ստացված սուբսիդիաների և ծախսված ուղղությունների վերաբերյալ տեղեկանքների փաստացի ծախսվել է ընդամենը 313,973.8 հազ. դրամ: Արդյունքում, անհրաժեշտ ծախսերի թերի պլանավորման հետևանքով 31.03.2020 թվականի դրությամբ ջրօգտագործողների ընկերությունների մոտ առաջացել է 148,707.1 հազ. դրամի չծախսված գումարի մնացորդ:

# ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Ջրային կոմիտեի 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվետվությամբ տարեկան ճշտված պլանի նկատմամբ ծախսերը կատարվել են 11.36%-ով: Ցածր կատարողականներ են արձանագրվել նաև «1004 Ոռոգման համակարգի առողջացում» ծրագրի շրջանակում «11002 Ոռոգման ծառայություններ մատուցող ընկերություններին ֆինանսական աջակցության տրամադրում» միջոցառման «452100 Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» և «31005 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի շրջանակներում ջրային տնտեսության ենթակառուցվածքների հիմնանորոգում» միջոցառման «511200 Շենքեր և շինություններ» հոդվածներով, որոնք կազմել են համապատասխանաբար՝ 23.1% և 27,6%: Վերջիններս արդյունք են ծախսերի թերի պլանավորմամբ և միջոցառումների իրականացման ընթացքի և արդյունքների կանխատեսումների ցածր մակարդակով:

2. Ջրային կոմիտեի կողմից չի ապահովվել գարնան նախապատրաստական աշխատանքների կատարման համար ջրօգտագործողների ընկերություններին սահմանված 30% գումարի չափաբաժնի հատկացման վերաբերյալ կնքված պայմանագրի 1.1.1 կետի պահանջի կատարումը:

3. Ջրային կոմիտեի կողմից թվով 6 ջրօգտագործողների ընկերությունների հետ սուբսիդիայի տրամադրման վերաբերյալ կնքված պայմանգրերում ներառվել և հետագայում վճարվել է նախորդ տարիներին նրանց մոտ «Սինխրոն» ՍՊԸ-ի հանդեպ առաջացած կրեդիտորական պարտքի մարման 21,986.6 հազ. դրամի չափով գումար, որը կարող էր մարվեր նախորդ տարիների պետական բյուջեից և սեփական միջոցներից տրամադրված գումարների հաշվին:

4. Ջրօգտագործողների ընկերությունների կողմից լիարժեք չեն կատարվել պայմանագրային պարտավորությունները՝ հատկացված գումարների ծախսման վերաբերյալ հաշվետվությունները սահմանված ժամկետներում ներկայացնելու մասով:

5. Ջրային կոմիտեն բավարար պահանջկոտություն չի ցուցաբերել ջրօգտագործողների ընկերությունների հանդեպ՝ աշխատանքների հանձնման-ընդունման ակտերը սահմանված ժամկետում ներկայացնելու նկատմամբ:

6. «1004 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման» ծրագրի 11005 և 31005 միջոցառումների մասով համաֆինանսավորման գումարները հատկացվել են փաստից (դրամարկղային ծախս) 187,274.7 հազ. դրամով ավելի չափով, ինչը

պայմանավորված է այն հանգամանքով, որ վճարումները կատարվում են Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի մասհանման հայտերի հիման վրա, իսկ դրանց ձևավորման և շրջանառության նկատմամբ Ջրային կոմիտեի վերահսկողական գործառույթներն սահմանափակված են գործող ընթացակարգերով:

7. 2020 թվականի հունվար ամսին ջրօգտագործողների ընկերությունների կողմից ներկայացված աշխատավարձի վճարման ցուցակներով հատկացման ենթակա սուբսիդիայի գումարը հաշվարկվել է 62,854.7 հազ. դրամի չափով, սակայն Ջրային կոմիտեի կողմից հատկացվել է 63,107.7 հազ. դրամ, կամ ավելի փոխանցված գումարը կազմել է 237.0 հազ. դրամ:

8. Ջրային կոմիտեի կողմից անտեսվել է ՀՀ պետական բյուջեից ջրօգտագործողների ընկերություններին սուբսիդիայի տրամադրման պայմանագրերի 1.1.2 կետի պահանջն՝ ըստ որի սուբսիդիայի գումարները հատկացվում են 2020 թվականի հունվար ամսին առաջացած աշխատավարձի և հարկային պարտավորությունների մասով պարտքերի մարման նպատակով: Արդյունքում, հատկացման ենթակա 23,113.9 հազ. դրամի փոխարեն ծախսվել է 77,841.6 հազ. դրամ, որից 54,727.6 հազ. դրամն ուղղվել է նախկին տարիների հարկի, տույժի և տուգանքի պարտքի մարմանը, կամ Ջրային կոմիտեի կողմից բավարար միջոցներ չեն ձեռնարկվել ջրօգտագործողների ընկերությունների կառավարման արդյունվետությունը և ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների համար նրանց պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ:

# ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

**ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը**

1. Վերանայել «1004 Եվրասիական զարգացման բանկի աջակցությամբ իրականացվող ոռոգման համակարգերի զարգացման ծրագրի» կատարման ընթացքում ֆինանսավորման հետ կապված ընթացակարգերը՝ մասհանման հայտերի ձևավորման, դրանց ներկայացման և ընդունման, վճարման ենթակա գումարների ճշտության ապահովման գործում Ջրային կոմիտեին վերահսկողական գործառույթներ ամրագրելու տեսանկյունից: Բացառել մասհանման հայտերով իրական ծավալից ավելի ֆինանսական միջոցների հատկացման փաստերը՝ վարկային միջոցների արդյունավետ և նպատակային օգտագործումն ապահովելու համար:

**Ջրային կոմիտեին**

2. Միջոցառումներ մշակել բյուջետային ծախսերի պլանավորման մակարդակը բարձրացնելու, ՀՀ պետական բյուջեով սահմանված ծրագրերի, ինչպես նաև դրանց շրջանակներում միջոցառումների և հոդվածների համար նախատեսված ծախսերի կատարումը ապահովելու ուղղությամբ :

3. Հետևել ՀՀ պետական բյուջեից սուբսիդիայի տրամադրման նպատակով կնքված պայմանագրերով սահմանված՝ պարտավորությունների կատարման ընթացքին, բացառել գումարների տրամադրման գործում ջրօգտագործողների ընկերությունների նկատմամբ տարբերակված մոտեցման դրսևորման երևութները:

4. Միջոցներ ձեռնարկել ջրօգտագործողների ընկերությունների հետ կնքվող սուբսիդիայի տրամադրման պայմանագրերով հատկացված գումարները նախորդ տարիներին գոյացած՝ կրեդիտորական, աշխատավարձերի վճարման, հարկերի, տույժերի և տուգանքների գծով կուտակված պարտավորությունների մարումը բացառելու, այդ գործում նրանց պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ:

5. Ներդնել մեխանիզմներ՝ կնքված պայմանգրերով նախատեսված՝ հաշվետվողականության վերաբերյալ պահանջների կատարման, աշխատանքների հանձնման-ընդունման ակտերը սահմանված ժամկետում ներկայացնելու համար ջրօգտագործողների ընկերությունների պատասխանատվությունը բարձրացնելու նպատակով:

6. Ապահովել ջրօգտագործողների ընկերություններին սուբսիդիայի գումարների հատկացումը նրանց կողմից ներկայացվող՝ ֆինանսավորման հիմքում ընկած փաստաթղթերում պարունակվող հաշվարկներին խիստ համապատասխան:

Հաշվեքննության իրականացման ընթացքում հաշվեքննվող օբյեկտից ստացվել է բավարար տեղեկատվություն:

Հայտնաբերված խեղաթյուրումները էական և համատարած բնույթ չեն կրում:

Ծանոթացման և ստորագրման նպատակով հաշվեքննության արձանագրությունը ներկայացվել է հաշվեքննության օբյեկտի ղեկավարին, որի վերաբերյալ ներկայացվել է գրավոր բացատրություն (պարզաբանումներ), առարկություններ չեն ներկայացվել (կցվում է):